ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 30-24

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան 02 02 2024 թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ժաննա Զաքարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս գործադիր տնօրենի լիազորությունները իրականացնող Թամարա Սարգսյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման միջոցառումները հաստատելու մասին» N 355-Լ որոշման 2-րդ հավելվածով հաստատված բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշման **1104. «Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն»** ծրագրի **11002 «Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակով տնտեսավարողներին աջակցություն»**

միջոցառմամբ նախատեսված՝ ***1 573 200 000 (մեկ միլիարդ հինգ հարյուր յոթանասուներեք միլիոն երկու հարյուր հազար)*** ՀՀ դրամ գումար (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք **Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակով տնտեսավարողներին աջակցության** միջոցառումը (այսուհետ՝ միջոցառում) ներկայացված է սույն պայմանագրի հավելվածում 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2. կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառման արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպության կողմից՝ որոշմամբ սահմանված դիմումների ուսումնասիրության արդյունքում ընտրվել են որոշման պայմաններին չբավարարող շահառուներ,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է 2.4 կետում նշված պայմանների ժամկետները:

2.1.4. Սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. միջոցառման իրականացման արդյունքում՝ որոշման պայմաններին բավարարող շահառուների առանձնացումից հետո պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. միջոցառմամբ նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը կատարել միջոցառման իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.2. իրականացնել միջոցառմամբ նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.3. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է որոշման և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 Հ-8 և տեքստային) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ դրամաշնորհային հաշվետվություն՝ համաձայն Հավելված 2-ի.

2.4.5. մինչև յուրաքանչյուր ամսվա 7-րդ աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով (excel և ստորագրված և կնիքված pdf տարբերակներով) պետական մարմին ներկայացնել հաշվետվություն՝ համաձայն Հավելված 8-ի և Հավելված 9-ի.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից միջոցառման իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. պայմանագրով սահմանված միջոցառման տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա դեկտեմբերի 20-ը:

2.4.9. սույն պայմանագրով նախատեսված միջոցառման տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները (խնայողությունները), մնացորդը կազմակերպությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ արդյունքն ընդունվելուն հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև դեկտեմբերի 20-ը:

2.4.10. սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականին ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

2.4.11 մինչև յուրաքանչյուր ամսվա 7-րդ աշխատանքային օրը պայմանագրին համապատասխան պետական մարմնին ներկայացնել բավարարված հայտերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7-րդ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով

սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդող ամսվա 10-ը ներկայացված ծախսերի կատարման հայտի (հաշվարկ-բացատրագրի) (հավելված N 7)՝ համապատասխան Ծրագրի ծախսերի նախահաշվի (հավելված N 6), և հանձնման-ընդունման (հավելված N 4) ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի NN 1 և 5 հավելվածներում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրի գործողությունը դադարելուց հետո Կողմերը շարունակում են կրել պատասխանատվություն մինչև Պայմանագրի դադարեցման պահը ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա

կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագրի ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝	Հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի 49/3
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	ՀՀ ֆինանսների նախարարության
Կենտրոնական գանձապետական	աշխատակազմի գործառնական
գործառնական վարչություն	վարչություն
Հ/Հ 900011042109	Հ/Հ 900018009457
ՀՎՀՀ 02698604	ՀՎՀՀ 00099892
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Գործադիր տնօրենի լիազորությունները կատարող՝
ԺԱՆՆԱ ՉԱՔԱՐՅԱՆ	ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

20:

կնքված N 30-24 ս

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահ գումա դ
1	Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակով տնտեսավարողներին աջակցություն	Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ընկերությունների արտադրողականության բարձրացման նպատակով բարձր որոկվորում ունեցող մասնագետների ներգրավմանը աջակցություն	Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառման իրականացում	Տնտեսավարողների կողմից ներգրավված բարձր որակավորում ունեցող մասնագետների թիվը (500)	31.12.2024թ.	եռամսյակային, մինչև հաջորդող ամսվա 10-րդ օրը	1 57
						ԸՆԴԱՄԵՆԸ	1 57

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042109
ՀԿՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
ԺԱՆՆԱ ՉԱՔԱՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018009457
ՀԿՀՀ 00099892

Գործադիր տնօրենի լիազորությունները կատարող՝
ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 2
2024 թ.02.02-ին
կնքված N30-24 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ)

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի համար	
Դրամաշնորհատու կազմակերպություն	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

2.3 Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.4 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.5 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

Հավելված 3
2024 թ.02.02-ին
կնքված N 30-24 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ հազ. դրամ (աճողական)

« Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակով տնտեսավարողներին աջակցության» միջոցառման														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թվականին ըստ ամիսների, այդ թվում՝											
			1-ին եռ			2-ին եռ			3-ին եռ			4-ին եռ		
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
		Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակով տնտեսավարողներին աջակցություն	340 000,0	340 000,0	340 000,0	680 000,0	680 000,0	680 000,0	1 020 000,0	1 020 000,0	1 020 000,0	1 573 200,0	1 573 200,0	1 573 200,0

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042109
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
ԺԱՆՆԱ ՉԱՔԱՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն»
ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018009457
ՀՎՀՀ 00099892

Գործադիր տնօրենի լիազորությունները կատարող՝
ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 4
2024 թ. -ին
կնքված N պայմանագրի

ՀԱՍՏԱՏԵՑ
Համակարգող փոխնախարար կամ
լիազորված անձ

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042109
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
ԺԱՆՆԱ ՉԱՔԱՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018009457
ՀՎՀՀ 00099892

Գործադիր տնօրենի լիազորությունները կատարող՝
ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

ԱԿՏ №

ՊԱՅՄԱՆԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2024 թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2024 թ.
Պայմանագրի համարը՝
Պետական մարմինը և Կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված № _ _ _ _ _ հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանգրի շրջանակներում Կազմակերպությունը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

Իրականացված միջոցառման							
		արդյունքը		կատարման ժամկետը		վճարման ենթակա գումարը (հազ. ՀՀ դրամ)	վճարման ժամկետը (ըստ պայմանագրի)
անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունները հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց՝

ստորագրություն

անուն, ազգանուն

Ծառայությունն ընդունեց՝

ստորագրություն

անուն, ազգանուն

Հավելված 5
2024 թ. -ին
կնքված N պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ *ՀՀ էկոնոմիկայի նախարարություն*

Կազմակերպության անվանումը՝ *«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ*

Ծրագրի անվանումը *«Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն»*

Ծրագրի համառոտ նկարագրություն	Միջոցառման ցուցանիշի անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ընթացքում (աճողական)			
		I եռամսյակ	I կիսամյակ	ինն ամիս	տարի
		քանակը	քանակը	քանակը	քանակը
1	2	3	4	5	6
Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակով տնտեսավարողներին աջակցություն	Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ընկերությունների արտադրողականության բարձրացման նպատակով բարձր որոկովորում ունեցող մասնագետների ներգրավմանը աջակցություն		410		500

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042109
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
ԺԱՆՆԱ ՉԱՔԱՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018009457
ՀՎՀՀ 00099892

Գործադիր տնօրենի լիազորությունները կատարող՝
ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 6
2024 թ. -ին
կնքված N պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ծ/ու	Միջոցառման Անվանումը	Միջինացված աշխատավարձ	Փոխհատուցման տոկոս	Փոխհատուցման ենթակա գումար	Քանակը և արժեքը	
					քանակ	արժեք
1	Բարձր որակավորում ունեցող մասնագետ	872 600,00	20	174 520,00	480	1 005 235 200,0
2	դոկտորական աստիճան ունեցող Բարձր որակավորում ունեցող մասնագետ	1 648 573,33	50	824 286,7	15	148 371 600,0
3	ԲՈՒՀ-երում դասավանդող բարձր որակավորում ունեցող մասնագետ	749 491,43	70	524 644,0	5	157 393 200,0
Ընդամենը					500	1 311 000 000,0
	Անվանումը	Տոկոսադրույքը				
4	Վճարվող ԱԱՀ	20				262 200 000,0
Ընդամենը						1 573 200 000,0

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
Հ/Հ 900011042109
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող
ԺԱՆՆԱ ՋՈՒՔԱՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք.Երևան, Կոմիտասի 49/3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018009457
ՀՎՀՀ 00099892

Գործադիր տնօրենի լիազորությունները կատարող
ԹԱՄԱՐԱ ՄԱՐՓԱՅԱՆ

Կ.Տ.

Հավելված N 7
2024 թվականի ----------կնքված
N---------- պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՅՏ N
ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Կազմակերպության անվանումը

900018009457
ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ

Բաժին 04 Խումբ 01 Դաս 01 Ծրագիր 22
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

2024 թ.
ԱՄՍԱԹԻՎ

Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառում

(ծրագրի անվանումը)

Հ/Հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈԴՎԱԾ	ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Առաջին կարգի
ստորագրություն՝

Երկրորդ կարգի
ստորագրություն՝

Կ. S.

Ծանուցում՝ Սույն հայտը ուժի մեջ է պահանջվող ֆինանսավորման, սույն պայմանագրի N6 հավելվածով հաստատված ծրագրի կատարման ծախսերի նախահաշվին համապատասխան տրված հաշվարկ-բացատրագրի առկայության դեպքում

Հավելված 8
2024 թ. -ին
կնքված N պայմանագրի

Ներկայացնող կառույց «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Դիմումի ժամանակահատված

Դիմումի ներկայացման ամսաթիվ՝

Ներկայացվող կառույցի անվանումը՝ ՀՀ ԷՆ

Հայտ

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի թիվ 355-Լ որոշման 2-րդ հավելվածով հաստատված բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառման շրջանակներում բարձր որակավորում ունեցող մասնագետների փոխհատուցման ենթակա աշխատավարձերի վերաբերյալ

N	Կազմակերպություն				ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ						այլ նշումներ
	Կազմակերպության անվանումը	ՀՎՀՀ	հասցե/գործունեության		Փոխհատուցման ենթակա աշխատակիցների թվաքանակը	Վճարված աշխատավարձերի չափ	Փոխհատուցման չափը (20%,50%,70%)	Փոխհատուցման ենթակա գումարի չափը	Փոխհատուցման մեկնարկի ամսաթիվ	Փոխհատուցման ավարտի ամսաթիվ	
			մարզ	համայնք							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	ԸՆԴԱՄԵՆԸ՝										

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
Հ/Հ 900011042109
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող
ԺԱՆՆԱ ՋԱՓԱՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051,ք. Երևան, Կոմիտասի 49/3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018009457
ՀՎՀՀ 00099892

Գործադիր տնօրենի լիազորությունները կատարող
ԹԱՄԱՐԱ ԱԱՐՈՆՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 8
2024 թ. ին
կից N պայմանագրի

Գործատուի կարգը «Նորամուտության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Գործատուի մասնաճյուղ

Գործատուի գտնվելու վայրը

Գործատուի անվանումը՝ ՀՀ էկ.

Ինքնամեկուսացման ռեժիմ

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի թիվ 355-Լ որոշման 2-րդ հավելվածով հաստատված բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառման շրջանակներում բարձր որակավորում ունեցող մասնագետների փոխհատուցման ենթակա աշխատավարձերի վերաբերյալ

N	Հազմակերպություն				Աշխատակից							ՊՈԱԿ-ում դասավորող աշխատակից				Փոխհատուցում				ազգ. նշումներ
	Հազմակերպության անվանումը	ՀՎՀՀ	հասցե/գործունեության		Աշխատակցի անուն, ազգանուն, հայրանուն	ՀԾՀ	Միջոցառման գործունեության հաստատագրման ՊՈԱԿ-ի կամ կազմակերպության	Ղեկավարի գիտական աստիճան անվանումը՝ դոկտոր, թեկնածու, հայագիտության անվանումը	Աշխատակցի հավելյալ աշխատավարձի չափը	Փոխհատուցման չափը (20%,30%,70%)	Փոխհատուցման ենթակա գումար	ՊՈԱԿ-ում դասավորելու դեպքում ՊՈԱԿ-ի անվանումը	Աշխատավարձի չափը	Փոխհատուցման չափը (70%)	Փոխհատուցման ենթակա գումարը	Աշխատակցին հետ վերադարձած հարկերի չափը	Փոխհատուցման ենթակա գումարը սուն ամսվա համար	Ամբողջ ելքագրում իրականացվող փոխհատուցման գումարը	Փոխհատուցման ամսաթիվ	
	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
																	0			
ԸՆԴԱՄԵՆԸ՝																	0			

Գործատու

«Նորամուտության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
0051, ք. Երևան, Կոմիտասի 49/3
ՀՀ ֆինանսների նախարարության
մենեջմենտի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 90001800945
ՀԿՀՀ 00099892

Գործադիր տնօրենի լիազորությունները իրականացնող
ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Պետական մարմին

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
տեսչական գանձապետական
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 90001042109
ՀԿՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի պարտավորությունները կատարող
ԺԱՆՆԱ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ